## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



*Անցած կիրակի՝ մարտի 27-ին, Վիրահայոց թեմի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը քարոզ խոսեց Դատավորի կիրակիի մասին.*

*Մեծ Պահքի հինգերորդ կիրակին կոչվում է Դատավորի՝ «Անիրավ դատավորի եւ այրի կնոջ առակի» մասին: Ղուկաս ավետարանիչը նկարագրել է, թե ինչպիսին է եղել այն դատավորը, որը ո՛չ Աստծուց էր վախենում եւ ո՛չ էլ մարդկանցից ամաչում:*

*Մի քաղաքում կար մի այրի կին, որը խնդիր ուներ, գնում է այդ դատավորի մոտ: Բայց դատավորը տեսնելով, որ անտեր կին է, ուշադրություն չի դարձնում նրա խնդիրներին: Կինը շարունակում է գնալ, կանգնել դռան մոտ, խնդրել՝ ասելով, որ իր գործն էլ նայի ու առաջ տանի: Վերջապես դատավորը չկամությամբ լուծում է այդ կնոջ խնդիրը՝ մտածելով, որ այդպիսով կազատվի նրանից, : Վերջում Քրիստոս ասում է, որ, եթե վատ մարդը ի վերջո այդ կնոջ հարցը լուծեց, ապա բոլոր մեր խնդրանքները կլսի ու կլուծի ամենաարդար դատավորը՝ Աստված: Ահա սրանով է ավարտվում ողջ առակը, որը տալիս է խորհելու առիթ, թե ինչ է կատարվում մեր եւ Աստծու միջեւ:*

*Դատավոր, դատաստան բառերը մենք այսօր շատ ենք լսում: Քրիստոսի պատմած պատմությունն էլ նույնն է ցույց տալիս: Կառույցները, որոնք ստեղծվել են մարդու կողմից, երբեք չեն կարող լինել իդեալական: Հովհան Ոսկեբերանը 4-րդ դարում դատական համակարգը, դատաստանը համեմատել է սարդոստայնի հետ: Նա ասում է, երբ մի փոքր միջատ է ընկնում սարդոստայնի մեջ, խճճվում է, չի կարողանում դուրս գալ եւ, ի վերջո, սատկում է: Երբ ավելի մեծ միջատ է ընկնում սարդոստայնի մեջ, նա պատառոտում է սարդոստայնը եւ ազատվում...*

*Յուրաքանչյուրս ապրում ենք մեր կյանքով, մեր գործերով, մեր խնդիրներով եւ փորձում ենք մեր խնդիրները լուծել մեր ձեւով, մեր ուժերով: Երբ որեւէ բան է տեղի ունենում, եւ զգում ենք, որ անզոր ենք, այդ ժամանակ սկսում ենք եկեղեցի գալ, որտեղ առաջ չէինք գալիս, մոմ վառել եւ խնդրել Աստծուն, որպեսզի մեր խնդիրը լուծի: Եկեք ամեն մեկս խոստովանենք, թե երբ ենք մենք սրտանց դիմում Աստծուն՝ երբ տեսնում ենք, որ ուժ չունենք, երբ տեսնում ենք, որ մեր առջեւ ծառացած խնդիրը մենք չենք կարող լուծել մեր ուժերով: Ահա այդ ժամանակ գալիս, մոմ ենք վառում, աղոթում Աստծուն՝ խնդրելով մեր խնդիրը լուծել:*

*Բայց երբ ինչ-որ բան մեզ մոտ ստացվում է, լինի դա լավ, թե վատ, մոռանում ենք, ոչ Աստծուն ենք հիշում, ոչ էլ մտածում ենք նրա մասին:*

*Ահա այս հանգամանքի վրա է ուշադրությունը կենտրոնացնում Քրիստոս, երբ պատմում է այս առակը:*

*Այսօրվա կիրակին թող լինի յուրաքանչյուրիս համար հույսն ու հավատը ավելացնող մի կիրակի, որպեսզի այսօր, երբ վերադառնանք մեր տները, հիշենք՝ եթե մշտապես խնդրենք մեր խնդիրներից մեզ ազատել, ապա մի օր էլ կտեսնենք, որ այդ խնդիրները կարծես չքացել են, չկան: Ուղղակի մնում է հավատալ՝ Աստված միշտ մեզ հետ է, եւ մենք նույնպես միշտ լինենք Աստծու կողքին:*

*Ուժ, կարողություն բոլորիդ:*

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

# ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ԻՄ ՕԶՆԻ ԳՅՈՒՂԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

***Միջնակարգս ավարտել եմ 2004 թվականին, Ճիաթուրայում: Այդ նույն թվականին ընդունվել եմ Քութայիսիի Ակակի Ծերեթելու անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել եմ 2008-ին: 2009-2013 թվականներին Թբիլիսիի հոգեւոր ճեմարանին եւ ակադեմիային կից աստվածաբանության ինստիտուտում սովորել եմ հոգեբանություն ու կրոնագիտություն: 2015-2017 թվականներին մագիստրատուրայում՝ կատարելագործվել եմ վրացագետի մասնագիտությամբ: Այսօր նույն մասնագիտությամբ սովորում եմ դոկտորանտուրայի առաջին կուրսում: 2012 թվականից ավագ, 2019-ից առաջատար ուսուցիչ եմ:***



Միրանդա Իակոբիձե

...Մանկուց երազել եմ մանկավարժության մասին: Դպրոցում ցանկությունս առավել խորացավ, քանի որ ինձ կրթող ուսուցիչներն իսկապես իրենց գործի նվիրյալներ էին, արտակարգ մասնագետներ, որոնք իրենց մեծ ներդրումն ունեցան մանկավարժիս ձեւավորման մեջ:

24 տարեկան էի, երբ հեռուստատեսությամբ լսեցի «Վրաց լեզուն՝ ապագա հաջողության գրավական» ծրագրի մասին, որը ենթադրում էր էթնիկ փոքրամասնությամբ հոծ գյուղերի ոչ վրացալեզու հանրային դպրոցներ օժանդակ ուսուցչի գործուղում: Նրանք, տեղի վրաց լեզվի ուսուցիչների հետ պետք է դասեր անցկացնեին եւ ոչ ֆորմալ կրթության տարրեր ներբերեին դպրոցներ, փոխարենը՝ պետությունը ֆինանսավորելու էր մագիստրատուրայում նրանց ուսումնառումը: Գաղափարն անմիջապես գրավեց ինձ, եւ ես մասնակցեցի մրցույթին: Թեստավորման եւ հարցազրույցների փուլերն անցնելուց հետո, տեղեկացա, որ գործուղվելու եմ Ծալկայի մունիցիպալիտետի Աշխալա գյուղ:



Ծալկան ինձ համար բոլորովին օտար անկյուն էր, այն առաջին անգամ էի տեսնում քարտեզի վրա: Փորձեցի տեղեկություններ քաղել շրջանի եւ գյուղի մասին: Գյուղ եկա 2012 թվականի փետրվարին: Այդ տարի առատ ձյուն էր եւ շատ ցուրտ, սկզբում վախեցա նույնիսկ, սկսեցի մտածել, թե, արդյոք կհարմարվե՞մ տեղի «սքանչելի» կլիմայական պայմաններին:

**Բայց, երեխաների պսպղուն աչքերն ու ուսումնատենչությունը ստիպեցին հաղթահարել բոլոր դժվարությունները: Տեղացիները մեծ հարգանքով եւ սիրով էին ինձ վերաբերվում, շատ հյուրասեր ժողովուրդ են, բոլորը փորձում էին որեւէ կերպ օգտակար լինել:**

Մեկ տարի անց, սկսեցի աշխատել նույն մունիցիպալիտետի Օզնի գյուղում: Հայկական միջավայրն արդեն ծանոթ էր ու այս անգամ հարմարվելն առավել հեշտ եղավ: Գյուղի կենտրոնում փակ տուն վարձեցի եւ սկսեցի ապրել մենակ: Մշտապես զգացել եմ տեղացիների աջակցությունն ու ջերմությունը: Հաճախ այցելում են ինձ նաեւ հյուրընկալում իրենց տներում: Տեղացիների հետ հաճախակի շփումների արդյունքում նույնիսկ սովորեցի խոսակցական հայերենն ու այսօր որոշ չափով հայերեն եմ խոսում: Հատկապես ջերմ հարաբերություններ ունեմ ընտանիքներից մեկի հետ, որի տանտիկինը՝ տիկին Լիանան, մայրաբար հոգ է տանում իմ մասին: Այս ընտանիքն իմ երկրորդ ընտանիքն եմ համարում, հաճախ եմ լինում նրանց տան հյուրը: Եթե հանկարծ ուշանում եմ, տիկին Լիանան անմիջապես զանգահարում է, հարցնում՝ ուր եմ, եւ հիշեցնում, որ գալու եմ, որ ինձ տաք ապուր է սպասում, եւ որ շատ չուշանամ հանկարծ:

Ջերմ ընդունելության արժանացա նաեւ դպրոցի տնօրեն պարոն Ռազմիկ (Ռուբեն) Հանեսյանի եւ դպրոցի աշխատակազմի կողմից: Մեր դպրոցը սակավաթիվ աշակերտներ ունի ու նման է իսկական մեծ ընտանիքի, եւ սա նախեւառաջ տնօրենի շնորհիվ է: Մենք ուրախանում ենք միմյանց հաջողություններով ու հարկ եղած դեպքում՝ օգնում իրար: Ուրախալի է, որ սուցիչներից յուրաքանչյուրը ձգտում է էլ ավելի զարգանալ, առաջ գնալ եւ թարմություն բերել ուսումնական գործընթաց: Անընդհատ հետաքրքրվում են կրթության ոլորտում ընթացող փոփոխություններով, նորամուծություններով եւ փորձում հաղթահարել ժամանակակից մարտահրավերները:

2015 թվականից աշխատանքս շարունակում եմ «Ոչ վրացալեզու դպրոցների մասնագիտական աջակցության շրջանակներում» նախագծում՝ գործելով նույն դպրոցում՝ որպես խորհրդատու մանկավարժ:

**Ինձ շատ է ուրախացնում այն փաստը, որ զգալիորեն մեծացել է ուսուցիչների կողմից պետական լեզվի տիրապետման մոտիվացիան:**

«Ոչ վրացալեզու դպրոցների մասնագիտական աջակցության շրջանակներում» ուսուցիչները պետական լեզվի դասընթացն անցնում են ա1, ա2 եւ բ1 մակարդակների հիման վրա: Բ1-ի վկայագիրը ստանալուց հետո, այն ուսուցիչները, ում առարկայական նվազագույնը հաստատվում է 1 կրեդիտով, մասնագիտական հմտությունների երկարաժամկետ թրեյնինգ-դասընթաց են անցնում, որը, հաջողությամբ յուրացնելու դեպքում, ավագ ուսուցչի կարգավիճակ են ստանում: Այս ճանապարհով Օզնի հանրային դպրոցում ավագ ուսուցչի կարգավիճակ է ստացել արդեն մեկ ուսուցիչ, իսկ մյուսները դրան հասնելու ճանապարհին են:

Էլ ավելի շատ եմ ցանկանում, որպեսզի աշակերտները ավելի ակտիվ մասնակցություն ունենան արտադասարանային միջոցառումներին: Օզնիի հանրային դպրոցի աշակերտները քանիցս մասնակցել են մրցույթների եւ կոնֆերանսների՝ ինչպես տարածաշրջանի, այնպես էլ՝ ողջ երկրի տարածքում: Նախքան համավարակը, հաջողացրի մեծ թվով էքսկուրսիաներ կազմակերպել, որոնց շրջանակներում աշակերտները ծանոթացան Վրաստանի տարբեր անկյուններին:

Մասնակցություն ունեցանք բազմաթիվ նախագծերում: Դրանցից մեկը, որն իրականացրի մի քանի տարի առաջ, բովանդակում էր էկոլոգիական գիտելիքների հարստացում: Նախագծի ավարտին, տպագրվեցին աշակերտների կողմից կազմված երկլեզու բուկլետներ, իսկ դպրոցը պարգեւատրվեց երաժշտական կենտրոնով, խոսափողով եւ անհրաժեշտ գրենական պարագաներով: Ծրագիրը ֆինանսավորել էր SIC-ն կազմակերպությունը:

Վրաց լեզվի ուսուցիչների՝ Զամիրա Կոբիաշվիլու եւ էթեր Խիմշիաշվիլու հետ աշնանն իրականացրինք «Երկիր մոլորակը մեր տունն է» նախագիծը, որը ֆինանսավորվեց տեղի կազմակերպության՝ LAG-ի կողմից: Շահած դրամաշնորհով դպրոցի բակում ատրակցիոններ տեղադրվեցին: Միասին բազմաթիվ միջոցառումներ ենք անցկացրել, որոնք ծառայել են աշակերտների ու նաեւ գյուղի բնակչության շրջանում վրաց լեզվի եւ մշակույթի հանրայնացմանը:

Վրաց լեզվի ուսուցիչներս ուրախ ենք, որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են սովորում վրաց լեզուն: Հիշում եմ՝ 2013 թվականին, երբ սկսեցի աշխատել Օզնիի հանրային դպրոցում, վրաց լեզվի երկրորդ մակարդակի դասագիրքը բերվել էր միայն 6-րդ դասարան, իսկ այսօր երկրորդ մակարդակի դասագրքով սովորում են նաեւ երկրորդ-երրորդ դասարանները: Սա մատնանշում է, որ վրաց լեզվի ուսումնառության, տիրապետման առումով պատկերը շեշտակիորեն փոխվել է: Այս փուլում շրջանավարտներից գրեթե յուրաքանչյուրը ազատ խոսում է վրացերեն:

Ինտեգրացիային նպաստում են նաեւ մունիցիպալիտետներում անցկացվող տարբեր միջոցառումները, որտեղ ազգությամբ հայ երեխաներն իրենց վրաց հասակակիցների հետ կանգնում են նույն բեմում, ծանոթանում վրաց մշակույթին, պարին ու երգարվեստին:

**Հատկապես հպարտ եմ, որ դպրոցի շրջանավարտների բացարձակ մեծամասնությունն այսօր ուսումը շարունակում է վրացական համալսարաններում: Մեծ թվով շրջանավարտներ են հարյուր տոկոսանոց դրամաշնորհ ստանում համալսարանների ընդունելության քննություններին: Ասեմ նաեւ, որ մեր դպրոցն ունի մի քանի ոսկե մեդալակիր: Ես նրանց ակտիվ երկրպագուն եմ եւ ուրախանում եմ յուրաքանչյուրի առաջընթացով ու նվաճումներով:**

Շատ եմ սիրում Օզնին, իմ մասնագիտությունը, տեղի երեխաներին, այն միջավայրը, որտեղ աշխատում եմ: Հենց այդ պատճառով է, որ 10 տարվա ընթացքում աշխատավայրս փոխելու մասին երբեք չեմ մտածել: Այստեղ կմնամ այնքան, որքան զգամ անհրաժեշտությունս:

***ՄԻՐԱՆԴԱ ԻԱԿՈԲԻՁԵ***

***Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի գյուղի հանրային դպրոցի խորհրդատու մանկավարժ***

«Ախալի գանաթլեբա»,
24-30 մարտի, 2022 թ.

COVID - 19

# ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ԲԱՑԻ ՓԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՉԵՂԱՐԿՎԵԼ ԵՆ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված գրեթե բոլոր սահմանափակումները չեղարկվել են: Ուժի մեջ է մնացել միայն փակ տարածքներում եւ տրանսպորտում դիմակ կրելու պարտավորությունը:***



Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին, երկիրը մոտենում է համավարակի ավարտին: Նրա խոսքով, դրա վկայությունը հոսպիտալացման մակարդակի նվազեցումն ու առօրյա վարակումների կրճատումն են:

- Քանակական սահմանափակումները կհանվեն հանրային սննդի օբյեկտներում, ինչպես նաեւ սպորտի, արվեստի եւ այլ միջոցառումների ժամանակ: Հեռավար աշխատող մարդիկ կվերադառնան աշխատանքի: Վրաստանի այն քաղաքացիների համար, ովքեր երկիր են վերադառնում առանց «ՊՇՌ» թեստի, վերացվում է ինքնամեկուսացման պարտավորությունը: Պատվաստումների խրախուսման ծրագիրը կպահպանվի: Գործնականում բոլոր սահմանափակումներն ու կանոնակարգերը, բացառությամբ փակ տարածքներում եւ հասարակական տրանսպորտում դիմակ կրելու, կհանվեն,- ընդգծեց նախարարը:

Միաժամանակ, Զուրաբ Ազարաշվիլին բնակչությանը կոչ արեց` պահպանել ամենատարրական պահանջները. ֆիզիկական հեռավորությունը, փակ տարածքներում եւ տրանսպորտում դիմակ կրելու պարտավորությունը, քանի որ ըստ նախարարի, «միայն այդպես հնարավոր կլինի կանխել վարակման նոր ալիքը»: Կանխարգելող միջոցառումների թվում Զուրաբ Ազարաշվիլին նշեց նաեւ պատվաստման գործընթացի շարունակականությունը:

Ավելացնենք, որ Վրաստանում կորոնավիրուսի դեմ պատվաստումների խթանման ծրագիրը կշարունակվի նաեւ ապրիլ ամսվա ընթացքում: Հիսուն եւ բարձր տարիքի Վրաստանի քաղաքացիները կարող են օգտվել միանվագ 200 լարիի խրախուսական ծրագրից պատվաստման առաջին չափաբաժինը ստանալուց հետո: Իսկ նույն տարիքային խմբի այն քաղաքացիները, ովքեր կպատվաստվեն «խթանիչ» (booster) չափաբաժնով` միանվագ կստանան 100 լարի: Այն քաղաքացիների համար, որոնց տարիքը չի համապատասխանում կենսաթոշակային տարիքին, սոցիալական գործակալությունը հաշիվներ կբացի Liberty Bank-ի հետ կնքված պայմանագրով:

# ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆԱՑԵԼ Է, ՍԱԿԱՅՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է



***Ալերգոլոգ Բիձինա Կոլումբեգովը կոչ է արել հատկապես 50-ն անց քաղաքացիներին հնարավորինս արագ պատվաստվել կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի 3-րդ խթանիչ դեղաչափով:***

- Մենք պետք է շատ զգույշ լինենք: Հատկապես ռիսկային խմբերին խրախուսվում է պատվաստվել երրորդ խթանիչ դեղաչափով, մասնավորապես 50-ն անց քաղաքացիների դեպքում, քանի որ կովիդը` իբրեւ հիվանդություն, դեռեւս հաղթահարված չէ,- ասել է ալերգոլոգը:

Նա նշել է, որ այս պահի դրությամբ եւս (երբ որոշ սահմանափակումներ հանվել են) կարեւոր է պահպանել հակահամաճարակային կանոնակարգերը:

- Համաճարակաբանական իրավիճակը դեռեւս կայուն է: Սակայն բնակչության մեծ մասը չի հետեւում կանոնակարգերին, 80-90 տոկոսը դիմակ չի կրում, մինչդեռ փակ տարածքներում եւ հասարակական տրանսպորտում դիմակ կրելը խիստ պարտադիր պետք է լինի:

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ 488 ՄԻԼԻՈՆԸ

***COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 488 687 261-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 6 167 243-ը: Ապաքինվել է 423 702 866 մարդ:***

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ հաստատվել է **81 780 503** դեպք: Այստեղ մահացածների թիվը **1 007 320** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **43 025 775**-ի, մահացածներինը` **521 211**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **29 947 895**, մահացել` **659 860** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **25 614 843**, վարակի հետեւանքով մահացել` **142 273** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Թուրքիան, Իտալիան ու Հ.Կորեան:

**Հայաստանում,** ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **422 540-ի**, մահացածներինը` **8 616-ի**, ապաքինվածներինը` **410 042-ի**:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը **791 932** է: Վարակից մահացել է **9 692,** ապաքինվել` **781 889** մարդ:

**Վրաստանում,** վերջին տվյալներով, վարակվել է **1 648 653,** մահացել` **16 748,** ապաքինվել` **1 626 296** մարդ:

*Ապրիլի 1-ին, կորոնավիրուսով վարակման **407** նոր դեպքերից **194-ը Թբիլիսիում է, Աջարիայում` 15, Իմերեթիում` 49, Քվեմո Քարթլիում` 19, Շիդա Քարթլիում` 13 Գուրիայում` 32, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում` 32, Կախեթիում` 28, Մցխեթա-Մթիանեթիում` 9, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում` 9, Սամցխե-Ջավախեթիում` 7:***

***Ապրիլի 1-ի տվյալներով մահացել է 3 մարդ:***

# ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԱՅՆ 43,7 ՏՈԿՈՍԸ

***Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի (NCDC) տվյալներով, մարտի 31-ի դրությամբ ընդհանուր առմամբ իրականացվել է 2 859 230 պատվաստում:***

Ըստ NCDC-ի տվյալների` առնվազն 1 դոզայով պատվաստվել է 1 361 229 քաղաքացի կամ չափահաս բնակչության 47.4 տոկոսը: Ամբողջությամբ (երկու դոզա) պատվաստվել է 1 256 781 քաղաքացի կամ չափահաս բնակչության 43,7 տոկոսը:

Հատկանշական է, որ խթանիչ (booster) դոզայով պատվաստվել է 238 093 քաղաքացի:

12-15 տարեկանների շրջանում մեկ դոզայով պատվաստվել է 4 131 քաղաքացի (2,33 տոկոսը), ամբողջությամբ պատվաստվել է 3 268 քաղաքացի (1,84 տոկոս):

16-17 տարեկան դեռահասների շրջանում մեկ դոզայով պատվաստվել է 12 608 քաղաքացի (15,55 տոկոսը), ամբողջությամբ պատվաստվել է 11 152 քաղաքացի (13,75 տոկոսը):

*Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ` ԲԺԻՇԿ

# ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԳԵՎԵԼՈՒ 35 ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԱՐԻՆԵՐ

***Մեր զրուցակիցն է Նինոծմինդայի շրջանային հիվանդանոցի մանկաբարձ-գինեկոլոգ Կարինե Սահակյանը: Աշխատանքն ապրելակերպ համարող բժշկուհին արդեն 35 տարի է նվիրվածությամբ ու սիրով իր մասնագիտական գործունեությունն է իրականացնում եւ հարյուրավոր կանանց մայրանալու բերկրանք պարգեւում:***

***- Տիկին Կարինե, մի փոքր խոսենք Ձեր մասնագիտական ուղու մասին:***

- Ավարտել եմ Մոսկվայի Ի.Սեչենովի անվան առաջին պետական բժշկական համալսարանը, որը Ռուսաստանի առաջին բժշկական բուհն էր համարվում, ապա հինգ տարի Մոսկվայում եմ աշխատել, 1987 թվականից տեղափոխվել եմ Նինոծմինդա եւ առայսօր աշխատում եմ շրջանային հիվանդանոցում` որպես մանկաբարձ-գինեկոլոգ: Աշխատանքային փորձին զուգահեռ անցել եմ բազմաթիվ մասնագիտական վերապատրաստումներ:

***- Բժշկի մասնագիտությունը երազա՞նք էր, նպատա՞կ, թե՞...***

- Երազանք: Մանկությունս անցել է քաղաքի կենտրոնում` Պուշկինի փողոցի վրա գտնվող բազմաբնակարան շենքում: Մեր հարեւանությամբ էին ապրում բժշկուհիներ Զուլյա Դավթյանը, Նեկտար եւ Ռուզաննա Դուրգարյանները, Լիդա Սավոյանը, ովքեր էլ ինձ համար վառ օրինակ են եղել մասնագիտությանս ընտրության հարցում: Ինձ անչափ գերում էր նրանց բազմաբովանդակ, հետաքրքիր ու տարբերվող առօրյան: Նրանց համար օրը ո'չ սկիզբ ուներ, ո'չ ավարտ, օրվա 24 ժամը նվիրված էր աշխատանքին: Նրանց տեսնելով` երազում էի դառնալ այդ պատասխանատու եւ դժվար մասնագիտության կրողը: Անգամ տիկնիկներիս հետ « բժիշկ-բժիշկ» էի խաղում: Մայրս անընդհատ դժգոհում էր, որ տան բարձերը միշտ թաց էին, ներարկումներ էի անում...

***- Եթե բժիշկ չդառնայիք, ի՞նչ այլ մասնագիտություն կընտրեիք:***

- Համարյա 40 տարի բժիշկ աշխատելուց հետո, դժվար է նույնիսկ այլ մասնագիտության մասին մտածել, պատկերացնել որեւէ այլ բնագավառ: Կարծում եմ, որ բժշկի մասնագիտությունը կյանքի ինչ-որ փուլում դադարում է ամենօրյա աշխատանք լինել եւ վերածվում է ապրելակերպի:

***- Ի՞նչն եք համարում ամենաէականը բժշկի մասնագիտության մեջ:***

- Գիտելիքներն ու աշխատանքային փորձը, սերը մասնագիտության եւ մարդու հանդեպ, պատասխանատվությունն ու դժվարությունները հաղթահարելու կամքը եւ, ի վերջո, համբերատարությունը:

***- Բացի բժշկությունից, ինչո՞վ եք սիրում զբաղվել:***

- Գուցե տարօրինակ թվա, բայց օրվա ամենասիրելի պահերն ինձ համար հաճախորդներիս լսելն ու նրանց հետ զրուցելն է, իհարկե, դա զբաղմունք չեմ համարում: Յուրաքանչյուր կնոջից այնքան բան կարելի է սովորել, եւ ի վերջո, երբ լսում ես նրանց պատմությունները կամ գուցե նաեւ խնդիրները, զգում ես, որ աջակցում ես` թեկուզ միայն լսելով կամ խորհուրդներ տալով: Իսկ աշխատանքից դուրս շատ եմ սիրում ճանապարհորդել եւ հիշողություններս համեմել վառ տպավորություններով:

***- Մաղթանք եւ խորհուրդ` կանանց...***

- Մաղթում եմ, որ բոլորը լինեն առողջ,



հաճախ դիմեն իրենց համար վստահելի մասնագետին, անցնեն զննումներ, հետազոտություններ, որպեսզի վաղ ախտորոշվեն հիվանդությունները եւ հիմնովին բուժվեն: Կանանց մաղթում եմ, որ լինեն գնահատված, մայրանան եւ վայելեն մայր լինելու գերագույն զգացողությունը:

***Զրուցեց ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ***
***ք.Նինոծմինդա***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ



*Ապրիլի 1-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերի նախարար Զբիգնեւ Ռաուի հետ:*

Կողմերը քննարկեցին օրակարգում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր: Հայկական կողմը ԵԱՀԿ նախագահին մանրամասն իրազեկեց Փառուխ գյուղ Ադրբեջանի զինված ուժերի ներխուժման հետեւանքով ստեղծված իրադրության մասին:

Նիկոլ Փաշինյանը եւ Զբիգնեւ Ռաուն անդրադարձան Լեռնային Ղարաբաղի շուրջ, Հայաստան-Ադրբեջան սահմանին ստեղծված իրավիճակին: Կողմերը կարեւորեցին ԼՂ հակամարտության համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակում եւ նշեցին Արցախի բնակչության հիմնարար իրավունքների պաշտպանության կարեւորությունը:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին նաեւ միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ:

Այցի շրջանակներում, ԵԱՀԿ գործող նախագահ, Լեհաստանի արտաքին գործերի նախարար Զբիգնեւ Ռաուին հանդիպումներ ունեցավ նաեւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի եւ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ:

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ



*Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը պատրաստակամություն հայտնեց նախագահական ինստիտուտը ծառայեցնել կրթության եւ գիտության զարգացմանը:*

Երեւանի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամների հետ հանդիպմանը Վահագն Խաչատուրյանը նշեց, որ, ելնելով պաշտոնական դիրքից, այս պահին չի կարող շարունակել դասախոսի աշխատանքը: Բայց եթե բուհերում ունենան իր կարիքը, եւ ինքը զգա, որ կա դասախոսության կարիք, ապա մշտապես պատրաստ է դա իրականացնել:

Նախագահն անդրադարձավ բարձրագույն կրթության կարեւորությանը, ապա խոսեց խնդիրների ու մարտահրավերների մասին:

- Եթե համախմբված չգործենք, առաջ գնալ չենք կարողանա: Հայաստանի Հանրապետությանը հարկավոր են կրթված մարդիկ: Ե՛վ նախագահականում, ե՛ւ հատկապես նախարարությունում ես զգացի, որ մենք լուրջ մասնագետների պակաս ունենք,- եզրափակեց նախագահը:

Հանդիպման սկզբում ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը նշեց, որ ձեւավորված ավանդույթի համաձայն, երկրի առաջին դեմքերն այցելում են ԵՊՀ եւ պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողների հետ քննարկում տարբեր հարցեր, փոխանակում մտքեր՝ ի շահ պետության առաջընթացի եւ զարգացման:

## ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՌԵԿՏՈՐԻՆ

*Մարտի 30-ին Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանն ու նախարարի տեղակալ, բուհի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանն* (խմբ. արմատներով Վրաստանի Բոլնիս-Խաչեն գյուղից) *այցելեցին Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, հանդիպում ունեցան բուհի հոգաբարձուների խորհրդի անդամների եւ պրոֆեսորադասախոսական կազմի հետ:*



Վահրամ Դումանյանը շնորհավորեց բուհի նորընտիր ռեկտոր Սրբուհի Գեւորգյանին՝ վերջինիս մաղթելով բեղմնավոր աշխատանք ի շահ մանկավարժության:

Վահրամ Դումանյանը 80-ամյա հոբելյանի առիթով շնորհավորեց նաեւ մանկավարժական ոլորտի երախտավոր, երկար եւ պատվաբեր ճանապարհ անցած ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանին:

Ապա ԿԳՄՍ նախարարը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ նշելով, որ Հայաստանի կառավարության ծրագրում «առյուծի բաժինը» վերաբերում է հենց կրթությանը:

Անդրադառնալով բարձրագույն կրթության ոլորտի խնդիրներին՝ Վահրամ Դումանյանը կարեւորել է կրթության որակի բարձրացման, հավատարմագրման, պետական եւ ոչ պետական բուհերի միջեւ առողջ մրցակցային դաշտի ապահովման խնդիրները:

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ



*Մարտի 30-ին Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարի պարտականությունները ժամանակավոր կատարող Արմեն Փամբուխչյանը* (խմբ. արմատներով՝ Վրաստանի Ախալքալաքի քաղաքից) *հանդիպում ունեցավ Ռուսաստանի արտակարգ իրավիճակների նախարարության միջազգային գործունեության վարչության տնօրեն Վլադիմիր Սոլովյովի հետ, որը Հայաստան է ժամանել հումանիտար օգնություն փոխանցելու նպատակով:*

Հանդիպմանը Արմեն Փամբուխչյանը գոհունակություն է հայտնել ռուսական կողմին ակտիվ եւ արդյունավետ համագործակցության կապակցությամբ: Մասնավորապես, բարձր գնահատելով ներդրումը «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն»-ի զարգացման եւ վերազինման աշխատանքներում: Արմեն Փամբուխչյանն անդրադարձել է նաեւ ընթացիկ համատեղ ծրագրերին, դրանց իրականացման ժամկետներին եւ հնարավորություններին:

Իր հերթին, Վլադիմիր Սոլովյովը եւս բարձրածայնել է արդյունավետ փոխգործակցության փաստը:

Քննարկվել են «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն»-ի տարածքում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման ծրագրի ընթացքը, ինչպես նաեւ կենտրոնի հետագա զարգացմանն ուղղված համագործակցության հեռանկարները:

### ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ԿԿԱՅԱՆԱ ՓԱՇԻՆՅԱՆ-ՄԻՇԵԼ-ԱԼԻԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Ապրիլի 6-ին Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը Բրյուսելում համատեղ հանդիպում կանցկացնի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:*

### ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաստատել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անհատական կազմը:*

*Հանձնաժողովի անդամներն են իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Մանասյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Դ.Հակոբյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Ռ.Գրիգորյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Լ.Հակոբյանը եւ իրավագիտության մագիստրոս Ա.Գեղամյանը:*

### ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԵՏ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել արտախորհրդարանական քաղաքական ուժերի հետ համագործակցության խորհրդակցական ժողովի հերթական նիստին:*

*Նիստին ներկա էին «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, «Արդար Հայաստան» կուսակցության ղեկավար Նորայր Նորիկյանը, Հայաստանի եվրոպական կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանը, Հայաստանի Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախագահ Լեւոն Շիրինյանը, «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ Մհեր Տերտերյանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դավիթ Սանասարյանը, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցության Հայաստանի վարչության ատենապետ Սեդրակ Աճեմյանը եւ Տիգրան Արզաքանցյանը:*

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԻԳՈՐԾ 2022» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

*Հայաստանի ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի քանի պատգամավորներ հանդիպել են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչների հետ, քննարկելու «իԳործ» ծրագրին առնչվող հարցեր:*

*Հանդիպմանը քննարկել են ծրագրի նպատակները, հնարավորությունները եւ գործընթացների իրականացմանն առնչվող մի շարք հարցեր: Սկիզբ է դրվել համագործակցություն Ազգային ժողովի եւ ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ «իԳործ» 2022 ծրագրի շրջանակում:*

*Հիշեցնենք, որ 2022 թվականի մարտին մեկնարկել է ծրագրի երրորդ փուլը, որի արդյունքում նախատեսվում է ծրագրում ընդգրկել եւս 50 փորձագետ:*

### ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՓԻԼՈՅԱՆԸ

*Տեղեկությունը հաստատեցին Հակակոռուպցիոն կոմիտեից:*

*Ավելի վաղ, Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել էր, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունում քննչական գործողություններն իրականացվում են կոմիտեում քննվող քրեական գործի շրջանակում:*

*Անդրանիկ Փիլոյանը 2020 թվականի հուլիսի 7-ից զբաղեցնում է արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնը: Նրան շնորհվել է «Ազգային հերոս» բարձրագույն կոչումը:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ԱՊՐԻԼ

***3.04.2022 Գալստյան կիրակի***

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է: Հաստատվեց այն ճշմարտությունը, որ Փրկչի Գալստյամբ հնարավորություն ընձեռվեց մարդկությանը փրկության ուղով առաջնորդվել: Այս կիրակին միեւնույն ժամանակ Երկրորդ Գալստյան խորհուրդն ունի:

***7.04.2022 Ավետումն Սուրբ Աստվածածնի***

Ապրիլի 7-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին նշում է իր ամենակարեւոր տոներից մեկը՝ Սուրբ Աստվածածնի ավետումը: Գաբրիել հրեշտակի կողմից Սուրբ Մարիամին Փրկչի Ծննդյան Ավետման մասին պատմվում է միայն Ղուկասի Ավետարանում: Ավետարանի այս պատմությունը մեծապես արժեւորում է մայրությունը եւ ընդհանրապես բարձր գնահատում կնոջ դերը մեր կյանքում: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ավետման տոնը հռչակվել է Մայրության օրհնության օր: Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում այդ օրն օրհնության կարգ է կատարվում:

***9.04.2022 Ղազարոսի հարության հիշատակության օր***

## ՍՊՈՐՏ

### ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԸՄԲԻՇՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում եզրագիծը հատեց ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունը: Վրաստանի հավաքականը իր ակտիվում գրանցեց մեկ ոսկե եւ երկու բրոնզե մեդալ, իսկ Հայաստանի թիմը  բավարարվեց 1-ական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներով:

70 կգ քաշային կարգի եզրափակիչ փուլում 2017 թվականի աշխարհի չեմպիոն Զուրաբ Իակոբաշվիլին պարտության մատնեց հայաստանցի Արման Անդրեասյանին: 57 եւ 79 կգ քաշային կարգերում բրոնզե մեդալների արժանացան Բեքա Բուջիաշվիլին եւ Վլադիմիր Գամղրելիձեն:

Հայաստանի հավաքականից 61 կգ քաշային կարգում մայրցամաքի չեմպիոնի կոչումը նվաճեց Արսեն Հարությունը: Արման Անդրեասյանը 70 կգ քաշային կարգում արժանացավ արծաթե, իսկ Մանվել Խնձրցյանը 57 կգ քաշային կարգում՝ բրոնզե մեդալի:

### ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻ ԽԱՂԻ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Վրաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը մարտի 25-ին մրցակցի դաշտում, ընկերական հանդիպման շրջանակներում, 1:0 հաշվով պարտության մատնեց Բոսնիա-Հերցեգովինայի հավաքականին, իսկ մարտի 29-ին, կրկին մրցակցի դաշտում զրոյական ոչ-ոքիով ավարտեց իր ընկերական հանդիպումը Ալբանիայի ազգային ընտրանու հետ:

### ԿԱՏԱՐՅԱԼ ՁԱԽՈՂՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի հավաքականն անցկացնում է ծրագրված ընկերական հանդիպումներ: Ազգային ընտրանին մարտի 25-ին Երեւանում 1:0 հաշվով պարտության մատնեց Չեռնոգորիայի հավաքականին: Մարտի 29-ին Նորվեգիայի հետ ընկերական հանդիպումը կատարյալ ձախողում էր Հայաստանի թիմի համար: 16-րդ րոպեին կարմիր քարտի արդյունքում 10 խաղացողով մնացած թիմը չկարողացավ կարգավորել խաղը եւ կրեց ջախջախիչ պարտություն 0:9 հաշվով:

## ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

### ԶՈՅԱ ԱԲԵԼՅԱՆ-ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ



Կյանքի 91-րդ տարում մահկանացուն կնքեց Զոյա Եղիշեի Աբելյան-Արզումանյանը:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, ուսումը շարունակել է Թբիլիսիի պիոներջոկատավարների դպրոցում, ապա ընդունվել եւ ավարտել Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի հեռակա բաժինը:

1950 թվականից սկսել է մանկավարժական գործունեությունը, ավելի քան 40 տարի ղեկավարել շրջանային Պիոներտունը (այսօր՝ Սովորող երիտասարդների տուն), երկար տարիներ եղել է շրջանային ռադիոյի հաղորդավար, բազմիցս ընտրվել է դատարանի ատենակալ:

Զոյա Աբելյանի գործունեությունը գնահատվել է պետական բազմաթիվ պարգեւներով, այդ թվում՝ Վրաստանի Պատվո շքանշանով:

Ամուսնու՝ շրջանում հայտնի մտավորական, ճանաչված հասարակական գործիչ, շրջանում մեծ հարգանք վայելող Մաքսիմ Արզումանյանի հետ ապրած տարիները իսկական հայուհու՝ ամուսնուն անմնացորդ նվիրվածությամբ տիկնոջ վառ օրինակ են հանդիսացել:

Նա երեք զավակների մայր էր, տասը թոռնիկների սիրված տատիկ:

Զոյա Աբելյանի պայծառ հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

*Գործընկերներ, հարազատներ*

### ԳԵՎՈՐԳ ԱՅՎԱԶՅԱՆ



40 օր առաջ, կյանքի 83-րդ տարում իր մահկանացուն կնքեց ճանաչված մտավորական, վաստակաշատ լրագրող, Նինոծմինդայի «Արշալույս» թերթի երկարամյա աշխատակից Գեւորգ Վարդգեսի Այվազյանը՝ շրջապատում հարգված եւ սիրված մեր ժիրիկը:

Երեւանի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, Գեւորգ Այվազյանը երկու տարի ուսուցիչ է աշխատել Հայաստանի Աշոցքի /նախկին՝ Ղուկասյան/ շրջանի Ղազանչի գյուղում, 1964-1967 թվականներին՝ հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, ապա տեղափոխվել է շրջկենտրոն եւ դասավանդել տեղի հայկական միջնակարգ դպրոցում:

1967 թվականին Գեւորգ Այվազյանն աշխատանքի է անցել շրջանային «Արշալույս» թերթի խմբագրությունում. նախ՝ որպես բաժնի վարիչ, ապա՝ որպես խմբագրի տեղակալ: Այվազյան լրագրողի փայլուն կենսագրությունը, տեւել ավելի քան կես դար, քանի որ պաշտոնավարելուց հետո էլ՝ մինչեւ կյանքի վերջ, նա շարունակել է մնալ թերթի անդավաճան բարեկամը, խորհրդատուն ու թղթակիցը: Տասնամյակներ շարունակ շրջանային թերթում «Գեւորգ Այվազյան» ստորագրությունն արդեն ինքնին նշանակում էր, որ մատուցված է ընթերցողի սրտին շատ մոտ օրախնդիր՝ խորապես ուսումնասիրված, փաստերով հիմնավորված եւ անթերի հայերենով:

Գեւորգ Այվազյանը երեք հրաշալի զավակների հայր էր, հավատարիմ ընկեր, իմաստուն ուսուցիչ:

Գեւորգ Այվազյանի՝ մեր սիրելի ժիրիկի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

*Նինոծմինդայի մունիցիպալիտետի մտավորականության եւ ընկերների անունից՝*
***«ԱՐՇԱԼՈՒՅՍ» թերթի խմբագրություն***

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Վանքային հայտնի համալիր Վրաստանում՝ Դավիթ ...: 3.Ալ.Սպենդիարյանի օպերաներից: 9.Երգ-աղոթք ... Մարիա: 10.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում հանգչող մեր մեծ վիպասանը: 12.Ազգին դավող, ազգի դավաճան: 14.Մեծահարուստ, փողատեր: 15.Ոչ նիհար, պարարտ: 16.Թբիլիսիում նախկինում լույս ընծայվող եկեղեցական ամսագիր: 18.Ետ ..., տուն ...: 20.... Ջերսի, ... Յորք: 21.Բնակավայր Վրաստանում: 24.Սերգեյ Փարաջանովի ֆիլմերից «... բերդը»: 27.Արեւմտահայ բանաստեղծ ... Մեծարենց: 29.Անշունչ առարկա: 31.Հարցական դերանուն: 32.Ընտանի թռչուն: 34.Մսամթերք: 35.Համադասական կապակցող շաղկապ: 36.Վրաց գրող Ճաբուա Ամերաջիբիի պատմական վեպը՝ «... Թութաշխիա»: 38.Նամուս, պատիվ: 39.Հայ աստվածուհի: 41.Անձնական դերանուն: 42.Հերիք, բավական: 43.Վրաց իշխանը նախկինում: 46.Գետ Վրաստանում: 48.Արեւ, արեգակ: 49.Մեղրի հումքը: 50.Համադասական շաղկապ: 51.Չչորացած, ոչ չոր, խոնավ: 52.Ցավ, դառնություն: 54.Հովհ.Թումանյանի հերոսներից: 57.«Հեկեկացինք ... ու անուշ» (Հ.Շիրազ): 58.Երգչուհի ... Եսայան: 59.Մեծ օվկիանոս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Թբիլիսիում լույս տեսած գեղարվեստական ամսագրի հիմնադիրը՝ ... Լեւոնյան: 2.Ծովային, ջրային բույս: 4.Թաս, տաշտ, աման: 5.Ուղղամիտ, բարեհաճ: 6.Մարզ Հայաստանում: 7.Մեծ վիպասան Հովսեփ Շիշմանյանի կեղծանունը: 8.Քաղաք Նիդերլանդների արեւմուտքում, Նիդերլանդների Կառավարության նստավայրը: 11.Պարսիկ նշանավոր բանաստեղծ: 13.Ժամ են գնում ամեն օր եւ ... Աստծուն: 17.Ժամանակի միավոր: 19.Արա Գեղեցիկի կինը: 22.Իմաստ, բովանդակություն: 23.Րաֆֆու պատմավեպերից: 25.Շաբաթվա օր: 26.Հրանտ Մաթեւոսյանի գրական հերոս: 28.Վանքային համալիր Սյունիքի մարզում: 30.Հայտնի գյուղ Վրաստանի Ադիգենիի շրջանում: 33.Տարի, ամյակ: 35.Հարդարված, մշակված: 36.«..., ..., ելեք, կոչնակ, պահնակ» («Թմկաբերդի առումը»): 37.Ե.Չարենցի ստեղծագործություններից՝ «Երկիր ...»: 40.Ավ.Իսահակյանի թոռը: 42.Հիացական բացականչություն: 44.Ճաշի պարագա: 45.Ոչ արագ, կրիայի նման: 47.«Ցուրտը տարավ ... ու ձեռ» («Ճպուռն ու մրջյունը»): 53.Արեւի ճառագայթ: 54.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 55.Օժանդակ բայ: 56.Հայոց այբուբենի տառ: 57.Ցուցական դերանուն:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Աբովյան: 7.Մարգո: 8.Գեշ: 9.Բալետ: 12.Ածելի: 17.Նժար: 18.Քառակուսի: 21.Թոմաս: 22.Կաղամբ: 27.Տապար: 28.Ապագա: 31.Ուֆա: 32.Ալիկ: 33.Մկրատ: 36.Վկա: 38.Ոսկի: 40.Ասուն: 43.Դմակ: 45.Սոնի: 46.Խեկ: 48.Գող: 49.Դիմախաղ: 51.Վեգա: 53.Կենաց: 54.Միկա: 55.Ամ: 56.Տիրան: 57.Խալի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Բոյլ: 2.Գյուտ: 3.Անգղ: 4.Զրվեժ: 5.Մոխիր: 10.Աղաթ: 11.Երամ: 13.Ծնծղա: 14.Լայմա: 15.Ռուս: 16.Պիկ: 19.Ռոյալ: 20.Կազակ: 23.Ատամ: 24.Ապար: 25.Բրատ: 26.Ծունկ: 29.Պարս: 30.Գիվի: 34.Կվաս: 35.Արուն: 36.Վիմ: 37.Անկողին: 39.Կրկին: 41.Սոսե: 42.Նիզամի: 43.Դրացի: 44.Ազամա: 47.Եղեմ: 50.Մատ: 51.Վախ: 52.Գալ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445